«ԳԱՎԱՌԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՎԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց լեզու և Գրականություն առարկաների դասավանդման ընթացքում

Աշխատության հեղինակ՝ Ղարանլղցյան Մելսիդա Հենրիկի

Աշխատանքի ղեկավար՝ Հակոբյան Լիլիկ Երվանդի

ԳԱՎԱՌ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Բովանդակություն…… . 1
2.Ներածություն …… 2
3.Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց լեզու և Գրականություն առարկաների դասավանդման ընթացքում …… 3-5
4.Հայրենասիրությունը՝որպես արժեքային հանակար գ…… 5-9
5.Լեզուն, կրոնը և պատմությունը որպես արժեքային հանակար գ …….. 9-10
6.Մարդասիրությունը՝ որպես արժեքային հանակար գ …… 10
7. Դասի պլան …… 10-12
8.Բարոյականությունը՝ որպես արժեքային հանակար գ …… 13
9.Աշխատասիրությունը՝ որպես արժեքային հանակար գ …….. 14
10.Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես արժեքային հանակար գ .. 14-15
11.Դասի պլան …… 16-18
12.Եզրակացություն …… 19
13.Օգտագործված գրականության ցանկ …… 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակներում հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների գիտելիքների և կարողությունների ձևավորման գործում իրենց առանցքային դերն ու նշանակությունը ունեն արժեքները և արժեհամակարգի ձևավորումը; Մանկավարժական գիտության մեջ արժեքային համակարգ հասկացությունը ըմբռնվում է բավական լայն շառավիղով:Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող ժողովրդավարական, քաղաքական, հասարակական, մշակութային, տնտեսական մի շարք իրադարձություններով պայմանավորված փոխվում են հասարակության զարգացման հիմքում ընկած կարևոր համակարգեր և ոլորտներ: Մարդկության զարգացման նոր միտումները հանգեցնում են անձի արժեքային համակարգի, վերաբերմունքի, վարքագծի, աշխարհընկալման փոփոխությունների: Գաղտնիք չէ, որ այսօր սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ուղղակիորեն կապված է հասարակության մեջ տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններով:

21-րդ դարում նոր տեխնոլոգիաները, ծրագրերը, կրթական համակարգում օր օրի տեղի ունեցող փոփոխությունները և նորարարությունները թելադրում են նորովի մոտեցում յուրաքանչյուր սովորողի: Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած մեծ նշանակություն ունի: Աշխատանքը միտված է բացահայտելու և ներկայացնելու աշակերտների մեջ ձևավորված արժեքները: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, բարձր բարոյական հատկանիշներով օժտված, իր հայրենիքը սիրող քաղաքացու դաստիարակությունն է: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Յուրաքանչյուր առարկայի դասավանդում պետք է դառնա ոչ միայն գիտելիք հաղորդելու, այլև արժեքներ ձևավորելու գործընթաց:

Իսկ ո՞րն է հայոց լեզվի դերը արժեհամակարգի ձևավորման գործում. միանշանակ՝ լեզուն այն բանալին է, որ բացում է ճանապարհը դեպի մյուս առարկաներ:

Հետևաբար մեր կողմից ներկայացվող այս հետազոտական աշխատանքը նպատակաուղղված է առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցի ուսումնասիրությանը:

Իսկ որո՞նք են առաջադրված կարևորագույն խնդիրները .

. ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ համապատասխան մեթոդական գրականություն

. մեկնաբանել ,,արժեքային համակարգ,, հասկացությունը և դրա բովանդակությունը առարկայի դասավանդման համատեքստում

. վեր հանել սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման հիմնահարցերը, ուղիները և մեթոդները

. տարբեր հեղինակների ստեղծագործությունների մեկնաբանությամբ ցույց տալ համապատասխան գաղափարների մատուցման ձևերը

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

,,Ձեր համոզմունքները կերտում են ձեր մտքերը, ձեր մտքերը դառնում են ձեր խոսքերը, ձեր խոսքերը դառնում են ձեր գործողությունները, ձեր գործողությունները դառնում են ձեր սովորությունները, ձեր սովորությունները կերտում են ձեր արժեքները, ձեր արժեքները կերտում են ձեր ճակատագիրը,, :

Մահաթմա Գանդի

Մեր ժամանակի և ազգի առջև ծառացած հրամայական պահանջն է ազգային մտածողությամբ ու հոգեբանությամբ, կիրթ, հոգևոր և բարոյական բարձր արժեքներով, գեղագիտական նուրբ զգացողությամբ օժտված,բազմակողմանիորեն զարգացած քաղաքացիներ դաստիարակելը: Այդ նպատակով էլ կրթության և դաստիարակության կազմակերպումը ունի ազգային, համամարդկային և պետական կարևորություն: Կարևոր են ինչպես սովորողի գիտելիքները, կարողությունները, դիրքորոշումները, այնպես էլ արժեքային համակարգը, որի ձևավորումը ՀՀ հանրակրթության պետական չափորոշչում ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

Իսկ ի՞նչ է արժեհամակարգը:,,Արժեհամակարգ,,հասկացությունը մանկավարժական գիտության մեջ սահմանվում է բավական լայն շառավիղով:Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակի ոչ մանկավարժական մոտեցում խնդրին:Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և վերջինիս հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների, հատկապես գրականության դերը: Գրականության մեջ ներառված են տարբեր ժամանակաշրջանների հայ գրականության և, ընդհանրապես, համաշխարհային գրականության բարձրարժեք ստեղծագործություններ՝ սկսած գողթան երգերից, առասպելներից, ժողովրդական էպոսներից , մեր առաջին պատմիչներից ու բանաստեղծներից մինչև քսաներորդ դարի հայ գրականության ընտիր էջերը, հետևաբար Գրականություն առարկան հնարավորություն է տալիս հասկանալու, ապրումակցելու և գնահատելու արժեհամակարգը նաև ժամանակի հոլովույթում:Հենց այդտեղ կուտակված է անցյալի փորձը. որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է տարբեր որակներ և վերաբերմունք սեփական ժաղովրդի պատմության , նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների վերաբերյալ:Արժեհամակարգի ձևավորումը նպաստում է կատարյալ մարդ լինելուն, իսկ մարդ լինելը արվեստների արվեստն է: Ինչպես լավ բանաստեղծը, երաժիշտը, նկարիչն է իր ստեղծագործությամբ լույս և ջերմություն հաղորդում, այնպես էլ, լավ մարդ լինելով, յուրաքանչյուրն իր հոգում եղած լույսն ու ջերմությունը տարածում է շրջապատում:Մարդասեր մարդը բարի է,

առաքինի. մարդասիրությունը այն վեհ գաղափարն է , որից սկսվում է արժեքի գնահատումը:
Հայոց լեզուն և գրականությունը հնարավորություն են տալիս ավելի ակտիվ ճանաչողական գործունեության, հետևաբար այդ պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացի վրա իրենց ազդեցությունն ունեն մի շարք գործոններ՝ ազգային, մշակույթի, ընտանեկան, կրթական, հասարակական և սոցիալական: Հաշվի առնելով այս և այլ հանգամանքները՝ ժամանակակից մանկավարժությունը խիստ կարևորում է սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հենքի վրա ՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրթական տարբեր աստիճաններում սովորողներն ունենում են աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Կախված աշակերտների տարիքից, հանգամանքներից, միջավայրի ազդեցությունից փոխվում է մարդու արժեքային համակարգը:
Արժեքների ուսումնասիրության բնագավառում իր ուրույն հետազոտությունն է կատարել Շվարցը:Ըստ հեղինակի, երբ մարդը մտածում է արժեքների մասին,առաջին հերթին առանձնացնում է ,թե որ արժեքներն են առավել կարևոր իր համար այս կյանքում:Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի համար, բայց բացարձակ անկարևոր մյուսի համար:Արժեքների տեսություններում կարևորվում է այն հայեցակարգը,որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ վեց հատկանիշները.
. Արժեքները համոզմունքներ են:
Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է , ,,սթափվում,, են, երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են ,երբ կարող են այն վայելել:
.Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են մարդուն՝ կատարելու որոշակի գործողություններ:
Մարդիկ, որոնց համար հասարակական կարգը, արդարությունը կարևոր արժեքներ են, մոտիվացված են հետապնդել այդ նպատակները:
.Արժեքները լայն և ընդգրկուն հասկացություններ են:
Այս հատկանիշը տարբերակում է արժեքներն ավելի նեղ հասկացությունից, ինչպիսիք են նորմերը և մոտեցումները, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողությունների, օբյեկտների կամ իրավիճակների:
.Արժեքներ ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ:
Արժեքներն ուղղորդում են մարդկանց որոշակի գործողությունների:Մարդիկ որոշում են, թե ինչն է լավը, ինչը՝ վատ,արդարացնում կամ մեղավոր են ճանաչում, գործում կամ խուսափում են՝ հենվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:
.Մարդու գործողություններն ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով:
Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ արժեքներ:

Արժեքների մեկ այլ տեսություն էլ ներկայացրել է Մ.Ռոկիչին;Ըստ նրա՝ արժեքները բնութագրվում են հետևյալ հատկություններով:
. Մարդուն հատուկ արժեքների քանակը այնքան էլ մեծ չէ:
. Բոլոր մարդիկ ունեն միևնույն արժեքները,սակայ տարբեր մակարդակներով:
. Արժեքները կազմավորված են համակարգում:
. Արժեքների աղբյուրները դիտվում են մշակույթում,հասարակությունում և անձի մեջ:
. Գրեթե բոլոր սոցիալական ֆենոմենները դետերմինացված են արժեքներով:
Վերևում նշված տեսությունները ցույց են տալիս, որ արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են մշակույթը և հասարակությունը:
Անընդհատ զարգացող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները:Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում,անհրաժեշտություն է առաջանում՝ յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները:Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը,որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու առջև:
Այսօր դաստիարակության և ուսուցման գործընթացը կազմակերպելիս պետք է հաշվի առնել հետևյալը.
ա.Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը:
բ.Ի՞նչ հետաքրքրություններ և պահանջներ ունի:
գ.Ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում:
Պատահական չէ, որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդներն անցյալն ու ապագան կապող օղակներն են, որոնք ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ՝ փոփոխումը և փոխանցումը հաջորդ սերունդներին:
Հայաստանին պատուհասած Արցախյան գոյամարտը, քառասունչորսօրյա պատերազմը,սոցիալ-տնտեսական ճգնաժամը, քաղաքական արտաքին և ներքին տարաձայնությունները իրենց տխուր հետևանքն ունեցան՝պարարտ հող ստեղծելով տարաբնույթ երևույթների համար:Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդվ սերդի ՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին եղած պատկերացումները փոխվեցին, և այսօր ավելի դժվար է ուսուցչի աշխատանքը այդ առումով: Դժվար է խոսել Շուշիի մասին, երբ այն կորցրել ենք, ասել մարդը մարդու բարեկամն է, երբ Արցախը օրեր շարունակ շրջափակման մեջ է. հետևաբար այսպիսի իրականության մեջ մեծ վարպետություն է պահանջվում ուսուցչից ՝ իր նպատակին հասնելու համար:

Հայրենասիրությունը՝ որպես արժեքային համակարգ

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը,որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրությունն է , որը լավագույն կերպով մատուցվում է հայոց լեզվի, գրականության, հայոց պատմության դասընթացների ժամանակ:Այն մեծագույ

արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է ներշնչում , նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի և թշնամու մոտ: Դպրոցում ազգային արժեքների ձևավորման մեջ մեծ է հայ գրականության դասաժամերի դերը: Հայ գրականությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն:Առարկայի իմացությունը հնարավորություն է տալիս ՀՀ ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, մեր ժողովրդի դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնելու հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմելու համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքտ և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Առարկայի նպատակներից ամենակարևորը աշակերտներին ազգային արժեքներով զինելն է: Մերօրյա իրականությունը թելադրում է հայ սերնդին , առավել քան երբևէ, զինվել գիտելիքով և հայրենասիրությամբ՝ մեր թուլացած պետականության հիմքերը ամրապնդելու համա: Աչքի առաջ ունենալով ծանր պատերազմի հետևանքով ունեցած մեր կորուստները, և միևնույն ժամանակ մեր զինվորների կատարած հերոսական սխրանքները՝ գալիք սերունդը պետք է լավ գիտակցի իր վրա դրված մեծ պատասխանատվությունը: Այս գործում շատ մեծ է ուսուցիչներիս դերը, և մենք անելիքներ շատ ունենք մեր սերդին հայրենասիրությամբ և ազգային արժեքներով դաստիարակելու գործում: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև միջառարկայական կապերի կարևորության մասին: Առարկաների ճիշտ համագործակցության շնորհիվ է, որ աշակերտների մոտ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը: Կարող ենք նշել գրականություն և պատմություն առարկաների կապը՝ ներկայացնելով օրինակ՝,,Սասունցի Դավիթ,, էպոսը և արաբական արշավանքները: էպոսում վեր է հանվում մի ամբողջ պատմական ժամանակահատված՝ ներկայացնելով արաբական հարկային քաղաքականությունը, հայ ժաղովրդի ազատատենչության գաղափարը: Գրականության միջոցով ներկայացվում է հերոսների հույզերը և զգացմունքները: Դարեր շարունակ էպոսը կրթել է մեր ժողովրդին՝ տալով նրան կատարյալ մարդու իր իդեալը՝ մանկական մաքուր պարզություն, արժանապատվություն, արդարամտություն, վեհանձնություն ունեցողին, որ նաև մարդասեր է , այլասեր, ժողովրդասեր, խաղաղասեր, ազատասեր, հայրենասեր, բարեկամասեր, եղբայրասեր և պայքարող չարի դեմ: Պատահական չէ սեր արմատի կրկնությունը, այն քրիստոնեական մեր էությունը բնութագրող կարևոր նախապայման է: Հավատի և հույսի հետ ՝ նաև սեր: Այս արժեքներն են , որ փոխանցվում են աշակերտներին և ձևավորում ամուր ու կայուն արժեքային համակարգ:Աստեղ հարկ է նշել նաև, որ ՅՈՒՆԵՍԿՕ – ն հայկական ,,Սասունցի Դավիթ,, էպոսն ընդգրկել է մարդկության ոչ նյութական ժառանգության ցուցակում:Մեր էպոսը ճանաչվել է որպես համամարդկային մշակութային արժեք:Արժեհամակարգի ձևավորման համար անփոխարինելի դեր և նշանակություն ունի նաև հայոց լեզու առարկայի դասավանդումը:Հայոց լեզու ր գրականություն առարկաներիդասավանդման ժամանակ սովորողները ծանոթանում են հայոց լեզվին և հայ գրականության մեծանուն գրողների յուրօրինակ գործերին: Նրանց մոտ ձևավորվում է հատուկ վերաբերմունք դեպի համամարդկային արժեքները.

ռազմահայրենասիրություն, բարություն, ազնվություն, սեր, կամք, ճշմարտախոսություն, քաջություն, ազատություն և գեղագիտական այլ արժեքներ:Գրականության դասաժամերի ուսուցիչը, ներկայացնելով հայ գրողների ստեղծագործությունները, մի ամբողջ արժեքային ֆոնդ է փոխանցում աշակերտներին: Բավական է նշել Եղիշե Չարենցի ,,Ես իմ անուշ Հայաստանի,, բանաստեղծությունը, որը ձևավորում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սեր առ հայրենիք և սեր դեպի հայոց մեծերը՝ Նարեկացի, Քուչակ:
Մանկավարժական գործունեության մեջ մենք գործ ունենք մարդու հետ, ում պետք է առաջին հերթին մարդ մնալու արժեքը փոխանցենք:Եվ ինչպես ասել է մեծն Թումանյանը.

Անց են կենում,միայն անմահ
Գործն է խոսվում՝լավ ու վատ:
Ախ , երանի՝ ով մարդ կգա
Ու մարդ կերթա անարատ…

Թումանյանի ,,Թմբկաբերդի առումը,, պոեմի գլխավոր միտքը բարի գործի անմահության գաղափարն է, որն ավելի խորն ու ամբողջական է դառնում շնորհիվ պոեմում արտահայտված մյուս գաղափարների՝ հայրենասիրության և դավաճանության հակադրություն, սիրո ոգևորող և կործանիչ ուժի հաստատում, մարդկային կյանքի անցողիկության միտքը: Մարդ լինելու արժեքն է, որը ամենակարևորն է աշակերտի արժեքային համակարգի հիմքում, որն էլ լավագույնս փոխանցվում է հայոց լեզվի և գրականության դասաժամերին:Աշակերտների մեջ արժեքային համակարգ ձևավորվում է նաև մյուս բոլոր առարկաների դասաժամերին: Այսպիսով, բոլոր ուսումնական առարկաները, ճիշտ միջառարկայական կապերի կիրառմամբ, խմբային խաղերի միջոցով, բեմականացումներով, քննարկումներով, սահիկաշարերի ստեղծմամբ, միջոցառումների կազմակերպմամբ, խաղերի միջոցով, ներկայիս մեթոդաբանական գործիքները կիրառելով, կարող են սովորողների մեջ սերմանել արժեքային մի ամբողջ համակարգ:
,,Ակրթարթն էլ բավական է, որպեսզի հերոս դառնաս, սակայն մի ամբողջ կյանք է հարկավոր,որ դառնաս արժանավոր մարդ,, :

Բրյուլա

Պարզելու համար, թե որ արժեքներն են ձևավորվում աշակերտների մոտ ուսումնառության ընթացքում, հարկ եմ համարել կատարել հետազոտություն իմ դասավանդած դասարաններում: Հետազոտության ընթացքում հարցմանը մասնակցել են տարրական, միջին և ավագ դպրոցի մի խումբ աշակերտներ:Կարևոր է նշել նաև, որ հետազոտությունը կատարվել է Գավառի տարածաշրջանի դպրոցներից մեկում:Հարցին, թե որ արժեքներն են ձևավորվել ձեր մեջ դպրոցում,տարրական դպրոցի աշակերտների պատասխանը հետևյալն էր. ,,զինվորը, հայրենիքը, աշխատասիրությունը, հարգանքը, ծնողասիրությունը, ընկերոջը օգնելը,,:
Միջին դպրոցի սովորողները նշել են հետևյալ արժեքները. ,,ընտանիքը, սերը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, աշխատասիրությունը, անկեզծությունը ընկերությունը, հավատարմությունը,,:
Ավագ դպրոցի սովորողները ներկայացրել են հետևյալ արժեքները. ,,կյանքը, սերը,

հայրենասիրությունը, վստահությունը, անկեղծությունը, գիտելիքը, միմյանց գնահատելը, արժանապատվությունը, կամեցողությունը, նվիրվածությունը, ինքնուրույնությունը , առատաձեռնությունը, խոհեմությունը, մարդ լինելը,, :
Այսպիսով հետազոտական աշխատանք կատարելուց հետո կարող ենք ասել, որ բոլոր տարիքային խմբերում էլ ձևավորվում է այնպիսի արժեքային համակարգ,որը մեզ՝ ուսուցիչներիս լավատեսությամբ է ներշնչում: Մենք պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին, առավել ևս ներկայիս տեղեյկատվական բազմանյութ իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք չկորցնեն այն:
Հայրենասիրությունը `որպես արժեքային համակարգ, տարիքային բոլոր խմբերում առանձնակի շեշտադրումով հնչեցվեց:Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում ձևավորվում է կապվածություն հայրենի հողին,լեզվին ու ավանդույթներին:Հայրենասիրության լայն գաղափար կարելի է ձևավորել նաև Մ. Խորենացու ,,Հայոց պատմություն,, աշխատության միջոցով, որը մի ամբողջ հանրագիտարան է հայի, հայրենասիրության և ազգային արժեքների մասին: Քերթողահոր նպատակն էր իր ժամանակակիցների մեջ արթնացնել ազգային, հայրենասեր ոգի,նրանց մղել ազատագրական սխրանքի:Նույն նպատակով պատմիչը մեր անցյալից ընտրում և ներկայացնում է հատկապես քաջ ու կորովի առաջնորդների:,,Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել Հայկ-Արամ-Տիգրան, քանզի քաջերի սերունդները քաջերն են ,իսկ նրանց մեջ եղածներին ով ինչպես ուզում է ,թող կոչի,, . Մովսես Խորենացի
Խորենացու համար Հայկը նախընտրելի հերոս է՝ ըմբոստ խիզախությամբ, ազատասիրական ոգով, բռնակալի նկատմամբ դրսևորած անհանդուրժողակա նությամբ: Արամը ընդօրինակելի է հայրենիքի հանդեպ ունեցած մեծ նվիրումով, Տիգրանը ՝ ազգային բանակը վերազինելու, երկիրն ամեն տեսակի բարիքներով հարստացնելու վճռականությամբ: Պատահական չէ, որ դեռևս հինգերորդ դարում Խորենացին հասկացել է, որ յուրաքանչյուր արժեք ձևավորվում է կերպարի,օրինակի միջոցով, պատմիչը բացառիկ նշանակություն է տալիս պատմագրական երկերի ստեղծմանը: Նման ստեղծագործությունների ընթերցումը և ճիշտ մատուցումը սովորողներին մտորելու և եզրահանգումներ անելու հնարավորություններ է տալիս: Ցանկացած վեհ գաղափար սերմանելու համար ուսուցիչը պետք է ունենա տարատեսակ մեթոդների ու հնարների իր պահոցը, պետք է ստեղծի և կիրառի այնպիսի մեթոդներ, որոց օգնությամբ կհասնի իր նպատակին: Դասապրոցեսում կերպարը արժևորելու և նրա օրինակով սովորողին դաստիարակելու համար կարելի է օգտագործել կերպարի և սովորողի արժեքների համեմատում, և հենց այստեղ կբացահայտվի սովորողի նրա կողմից ընդունելի և ոչ ընդունելի մարդկային որոկները:Հայրենասիրությունը կարելի է դաստիարակել նաև պատմվածքների , բանաստեղծությունների, վեպերի, և ընդհանրապես, ցանկացած ստեղծագործության օգնությամբ: Հայրենասիրական թեմաներով գրված ցանկացած ստեղծագործության մեջ հեղինակը կամ քնարական հերոսը առաջին հերթին արտահայտում է հայրենասիրության կարևորությունը, գաղափարը , այն որ յուրաքանրյուր անհատի համար հայրենիք և ծնող հասկացությունները պետք է նույն հորիզոնականի վրա լինեն,պետք է կարևորել ու արժևորել հայրենիքն այնպես, ինչպես կարևորում և արժևորում ենք ծնողներին:

Եվ վերջապես հայրենասեր քաղաքացի դաստիարակելու համար պետք է կարևորել հետևյալը.

Որտեղի՞ց է սկսվում հայրենասիրությունը, ինչպե՞ս և ինչո՞ւ սիրել հայրենիքը:

Լեզուն, կրոնը, պատմությունը՝ որպես արժեքային համակարգ

Ցանկացած ազգի գոյապահպանման համար անփոխարինելի են համարվում նշված արժեքները:Հայ ժողովրդի համար լեզուն և կրոնը փոխկապակցված ըմբռնումներ են, որոնք հանդիսանում են գոյության և պայքարի հիմնասյուները: Ագաթանգեղոսը,որ իր պատմության մեջ անդրադարձել է քրիստոնեության տարածմանը, գրում է, որ քրիստոնեական վարդապետությունը լույս բերեց հայ ժողովրդի համար, փրկեց նրան սատանայական, դիցապաշտ բարքերից:Այս հասկացությունների արժևորումը սովորողների մոտ ձևավորվում է դեռևս տարրական դասարաններից, երբ երեխան հասկանում է,որ սովորելու համար նախ անհրաժեշտ է իմանալ տառերը, հետո նոր սովորել կարդալ,որպեսզի կարողանա հաղորդակցվել մարդկանց հետ,այնուհետև աստիճանաբար խորոցնել և ամրապնդել լեզվի, կրոնի և պատմության կարևորությունը:Թեմային անդրադարձող հոյակապ ստեղծագործություն է Խ.Աբովյանի ,,Վերք Հայաստանի,, վեպը,որտեղ Աբովյանը ներկայացնում է հայ ժողովրդի համար շատ կարևոր երեք հատկանիժ՝ֆիզիկական ուժ, հոգևեր կարողություն և բարոյական միասնություն: Ազգային գոյության առաջնային արժեքներից է հոգևոր դաստիարակությունը:

,, Ա՝խ լեզուն,լեզուն. լեզուն, որ չըլնի, մարդ ընչի՞ նման կլնի: Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզունա ու հավատը: Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր,էլ ինչո՞վ կարաս ասիլ,թե որ ազգիցն ես,, --- Խ.Աբովյան

Ահա անփոխարինելի այն արժեքները, որ ի զորու է տալ սովորողին ուսուցիչը: Աբովյանը բացահայտում է հայ ժողովրդի ամբողջ կենսագրությունը, հիշատակում երևելի հերոսների անունները,պատմում բերդերի և ավերակների հետ կապված ավանդությունները,ինչպես նաև ժողովրդի բարքերն ու սովորութները: Վեպի ճիշտ մատուցման, վերլուծության և մեթոդների ճիտ կիրառման շնորհիվ սովորողը բացահայտում է իր ազգային դիմագիծը, նա տեսնում է հայ մարդուն՝ իր առավելություններով ու թերություններով հանդերձ:Ստեղծագործությունների հիմքում եղած բարոյական արժեքները բացահայտելու համար ուսուցիչը օգտագործում է տարաբնույթ մեթոդներ:

Օրինակ՝ գրատախտակին գրում է թվարկված մի քանի արժեքներ, ապա հանձնարարում է աշակերտներին ստեղծագործությունիս դուրս բերել նշված արժեքին համապատասխան նախադասությունը, բառը կամ հատվածը: Աշխատանքային այս սկզբունքի միջոցով սովորողը կարողանում է վեր հանել նաև մարդկային թերությունները, դրա հիման վրա էլ փորձում է հասկանալ լավի ու վատի, բարու ու չարի, աշխատասիրության ու ծուլության, վսեմի ու նսեմի տարբերությունները:Ապա փորձում է շտկել իր սխալներն ու բնավորության վատ գծերը:Սովորողների տարիքային առանձնահատկությունները ուսումնասիրելով՝ տեսնում ենք, որ տարրական և միջին դպրոցի սովորողները ընկալում և զգում են ամեն մի մանրուք, արձագանքում են շրջապատում տեղի ունեցած իրադարձություններին մեծ հուզականությամբ:,,Քառաբաժան,, մեթոդի կիրառմամբ ուսուցիչը նպաստում է ոչ միայն ստեղծագործության գաղափարական

բովանդակության ընկալմանը, այլ բացահայտում է աշակերտի ընկալունակության սահմանները՝ հուզականությունը, արտահայտչությունը, երևակայությունը: Սովորողը շրջապատող աշխարհն ընկալում է իր անմիջական տպավորությունների և կերպարների միջոցով,որոնք ակնհայտորեն հետք են թողնում նրանց կյանքում և երբեք չեն մոռացվում, ուստի շատ կարևոր է հենց այդ տարիքից նպաստել երեխաների բարոյական դաստիարակությանը և սոցիալական զգացմունքների զարգացմանը: Ժամանակակից մանկավարժությունը բարոյական դաստիարակությունը բաժանում է երկու խմբի.

. խնդիրներ, որոնք միտված են բարոյական դաստիարակության մեխանիզմի բաղադրատարրերի ձևավորմանը

. խնդիրներ, որոնք միտված են անձնային բարոյական հատկանիշներին

Առաջին խմբի խնդիրները կայուն են, անփոփոխ և նպաստում են երեխայի մեջ յուրաքանչյուր բաղադրիչի ինքնուրույն ձևավորմանը:Երկրորդ խմբի խնդիրներն իրենց բնույթով փոփոխական են և շարժուն, դրանք բնորոշում են տվյալ հասարակության պահանջները՝ վաղվա քաղաքացու անձնային ձևավորման ուղղությամբ: Եթե նախկինում հասարակությունը առավել կարևորում էր աշխատասիրության և կոլեկտիվիզմի դաստիարակությունը, ապա հասարակության զարգացման արդի ժամանակահատվածում շեշտադրվում են մարդասիրությունը, հանդուրժողականությունը, կյանքի հանդեպ ակտիվ դիրքորոշումը, կրեատիվ-ստեղծարար ընդունակությունները, ինքնասիրությունն ու արժանապատվությունը, աշխատասիրությունն ու համագործակցությունը, հայրենասիրությունը , այսինքն՝այն ամենը, ինչը հանգեցնում է սոցիալական զգացմունքների զարգացմանն ու ձևավորմանը: Հետևաբար, հաշվի առնելով ժամանակի պահանջները, ժամանակակից մտածելակերպով մարդ կրթելու և դաստիարակելու համար կարևոր է, որ գրական նյութը իր թեմատիկ բովանդակությամբ լինի արդիական, շոշափելի, որպեսզի աշակերտը, բախվելով դրանց , կարողանա ճիշտ կողմնորոշվել:

Մարդասիրությանը՝ որպես արժեքային համակարգ

Մարդասիրությունը հարգանքի դրսևորումն է մարդ անհատի նկատմաբ: Մարդասիրությունը խաչվում է մի շարք հասկացությունների հետ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, բարությունը, կամեցողությունը, լավատեսությունը:Հայ գրականությունը անմասն չի այս թեմայով գրված ստեղծագործություններից: Մարդասիրության գաղափարը ցայտուն արտահայտվում է Վ. Սարոյանի , Հովհ. Թումանյանի , Մ. Մեծարենցի ստեղծագործություններում: Մարդասիրության դաստիարակության համար պետք է սիրել ու հարգել մարդուն, նրան դիտել որպես անհատ, որը ունի բնավորության իր տեսակը,իր խոհերն ու մտորումները,իր իրավունքներն ու պարտականությունները, առավելություններն ու թերությունները: Սովորողը պետք է հասկանա ու գիտակցի, որ մարդկիկ տարբեր են ու բազմազան, չկա լավ ու վատ մարդ,այլ կան տարբեր մոտեցումներ,եթե հարգում կամ սիրում ես մարդուն, հետևաբար հասկանում ես նրան , ներում ու հանդուրժում ես : Թե որքանով է մարդասիրության դաստիարակությունը նպաստում աշակերտների դաստիարակության զարգացմանը, ներկայացնում ենք այս թեմայով անցկացված դասի նմուշ-օրինակ:

Դասի պլան

Դասարանը և դասաժամը ---------- 8-րդ դասարան, Գրականություն:

Դասի թեման ---------- Մեծարենցի ,,Հյուղը,, բանաստեղծությունը:

Նպատակները:
1.Իմանան Մեծարենցի բանաստեղծական ընկալումը, բանաստեղծությունների բովանդակությունը, քնարերգության ընդհանուր պատկերը, բանաստեղծական շարքերի վերնագրերը: 2. Ընկալի արևմտահայ գրականության մեծարենցյան բացահայտումը:3.Բանաստեղծության տեքստը արձակ վերաշարադրի: 4.Զարգացնի գրողի օգտագործած բառապաշարը ուսումնասիրելու կարողությունները:

Վերջնարդյունք 1.Կկարողանա արտահայտիչ ընթերցել գրական բնագիրը և վերարտադրել բովանդակությունը:2.Կկարողանա վերլուծել բանաստեղծության պատկերային համակարգը: 3.Կնկարագրի քնարական հերոսին և կհասկանա գործողությունների շարժառիթը: 4.Կկարողանա ապրումակցել քնարական հերոսին և կարժևորի մարդասիրությունը:

Ուսումնական նյութեր: Մեծարենցի դիմանկարը, բանաստեղծությունների ժողովածուն, մեծարենցյան բնապատկերների և երգերի սկավառակը, դասագրքեր, տետրեր:

Կիրառվող մեթոդները: Մտագրոհ, բանալի բառեր, Т-աձև աղյուսակ, խմբային հետազոտություն:

Տևողությունը ---------- **45 րոպե:**

Ընթացքը ---------- **ԽԻԿ համակարգով:**
Խթանում: Գրատախտակին փակցնում եմ Մեծարենցի դիմանկարը: Որոշակի դրական տրամադրություն ստեղծելու համար միացնում եմ սովորողներին արդեն ծանոթ ,,Կարմիր ծաղիկ մը գարունի,, մեծարենցյան բառերով գրված հրաշալի երգը: Դասն սկսում ենք երգի ունկնդրումով, սկսում ենք երգել նաև մենք: Երգի ավարտից հետո վերհիշում ենք Մեծարենցի բանաստեղծական շարքերի վերնագրերը: Ապա առանձնացնում եմ ,,Ըլլայի՛, ըլլայի՛,, շարքը և ընթերցում ,,Իրիկունը,, և ,,Հովը,, բանաստեղծությունները: Աշա կերտները զուգահեռաբար դիտում են սահիկահանդես՝ մեծարենցյան բնապատկերներով: Որից հետո գրատախտակին գրառում ենք աշակերտների առաջին տպավորությունները: Ամբողջ դասարանին ներկայացնում եմ ուսումնասիրության նյութը՝ Մեծարենցի ,,Հյուղը՞,, բանաստեղծությունը՝ ավելացնելով, որ այս բանաստեղծությունը նույնպես ,,Ըլլայի՛, ըլլայի՛,, շարքից է:
Իմաստավորում: Դասարանը բաժանում եմ խմբերի՝ նյութի ուսումնասիրությունը սկսելու համար: Ընդ որում խմբերը ձևավորում եմ եռամակարդակ սկզբունքով՝ հիմք ընդունելով աշակերտների ուժերը, նրանց կարողություններն ու հմտությունները: Կատարում եմ աշխատանքի բաժանում. արտահայտիչ կարդալ սովորելը բորոր խմբերի համար պարտադիր է:
1.Դուրս գրել անծանոթ բառերը, բացատրել բառարանի օգնությամբ և դրանցով կազմել նախադասություններ: (ա մակարդակ)

2.Վերարտադրել բանաստեղծության բովանդակությունը, Մեծարենցի հոգեկան ապրումները և բնության տարերքի նրբությունը: (ա մակարդակ)
3.Բանաստեղծությունից դուրս գրել այն բառերն ու բառաձևերը, որոնք կան արևելահայ գրական լեզվում: Աշխատանքը ներկայացնել Т-աձև աղյուսակի միջոցով՝ ըլլալ – լինել… (բ մակարդակ)
4.Ընագրում գտնել և խմբավորված ներկայացնել գեղարվեստական պատկերավորման միջոցները՝ փոխաբերություն, մակդիր, կրկնություն: (բ մակարդակ)
5.Բանաստեղծության առաջին տունը փոխադրել արևելահայերենի և գտնել բանալի բառերը: (բ մակարդակ)
6.Վենի դիագրամով համեմատել ,,Հյուղը,,, ,,Իրիկունը,, և ,,Հովը,, բանաստեղծությունները: (գ մակարդակ)
7. Պատրաստել բանավոր հաղորդում դասագրքի ,,Հարցեր և առաջադրանքներ,, բաժնի 9-րդ առաջադրանքի հիման վրա՝ քրիստոնեական մարդասիրական պատվիրանները: (գ մակարդակ)

Կշռադատում: Խմբերը ներկայացնում են աշխատանքները: Ապա խնդրում եմ գրատախտակին գրել բանալի բառերը և դրանց օգնությամբ ներկայացնել բանաստեղծի հոգու և մտքի թռիչքը: Փորձում ենք ձևակերպել բանալի բառերի եզրույթները՝ մարդասիրություն, անանձնական սեր. եզրակացություն՝ մարդասիրությունը քնարական հերոսին մղում է ինչի ասես, միայն թե օգտակար լինի մարդկությանը:

Գնահատում: Կատարում եմ միավորային, ինչպես նաև ուսուցանող գնահատում:

Անդրադարձ: Ի՞նչ արեցինք, ինչպե՞ս և ինչո՞ւ: Աշակերտները քայլ առ քայլ վերհիշում են դասի ընթացքը, իմաստավորումը և արժևորում այն ,,Գեղեցիկը և ճշմարիտը,, մեթոդի օգնությամբ:

Տնային հանձնարարություն: 1.Անգիր սովորել բանաստեղծությունը (պարտադիր է բելորի համար):2.Պատրաստել գրավոր հաղորդում՝ ,,Ինչպիսին կլիներ աշխարհ, եթե բոլոր մարդիկ մտածեին Մեծարենցի նման,, :
3.Գրավոր շարադրանք՝ ,,Մեծարենցի կարեկցանքն ու սերը մարդկանց հանդեպ,, :

Մեծարենցի բանաստեղծությունները մարդասիրական բարձր արժեք ներկայացնող գործեր են:Դրանց ուսուցման նպատակը ոչ միայն սովորեցնելն է, այլ սովարողի մեջ մարդասիրություն ձևավորելը: Այսօր աշակերտի մեջ մարդասիրություն ձևավորելն անհրաժեշտություն է, որովհետև նման արժեքային համակարգ ունեցող անհատը կարող է միշտ օգտակար լինել բոլորին, իսկ այս ամենը կնպաստի մարդկանց բարյացակամ և հանդուրժող լինելուն: Գրական նմանատիպ ստեղծագործությունները կարող են սովորողի մեջ ձևավորել մարդկային վեհ հատկանիշներ:

Բարոյականությունը՝ որպես արժեքային համակարգ

Բարոյական արժեքներն այն գաղափարներն են ,որոնք մարդիկ ունենում են վարքագիծ ցուցաբերելիս:Ասում են, որ մարդն ունի բարոյական արժեքներ,երբ ունի սովորույթներ և նորմեր, որոնք համարվում են դրական և լավ ուրիշների բարեկեցության համար: Բարոյական արժեքների օրինակներ են հարգանքը առատաձեռնությունը, անկեղծությունը, բարությունը:Այս տեսակի արժեքներ ունեցող մարդը համարվում է բարոյական:Բարոյական արժեքները փոխանցվում են սերնդեսերունդ, ինչը կարևորում է կրթության կարևորությունը ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ դպրոցական միջավայրում, քանի որ երկու միջավայրերն էլ հանդիսանում են հիմնական ուսուցման օղակները: Ու թեև բարոյական արժեքները կարևոր են, սակայն այսօր, ցավոք սրտի, անկում են ապրում:Բարոյական արժեք ասելով՝ հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, որոնք ապահովում են սովորողի բարոյական ,առաքինի կյանքն ու նկարագիրը: Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևոր-բարոյական արժեքները՝ տրված Աստծո կաղմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով:

Սուրբ Ներսես Շնորհալին իր աղոթքներից մեկում խնդրում է,որ Աստված իրեն գոյություն տա, որպեսզի աչքերը չնայեն արատավոր բաների, և ականջները չլսեն մեղսալի, անպարկեշտ, չար խոսքեր: Այսօր ոչ միայն մարդկանց հետ շփվելիս, այլ հաճախ համացանցից օգտվելիս կանգնում ենք այն անցանկալի իրողության առջև, որը շեշտել էր Շնորհալին՝ անպարկեշտ բաներ տեսնելու և լսելու վտանգի առջև: Պետք է չափազանց զգոն լինել ներկա տեղեկատվության ու զվարճանքների հորձանուտում չընկնելու համար: Ինչպես բարոյական վարքի սովորությունների դաստիարակումը, այդպես էլ բարոյական գիտակցության ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների կիրառմամբ:Դրանց միջոցով է ուսուցիչը հասնում այն բանին, որ սովորողները գիտելիքներ յուրացնեն բարոյականության և կանոնների մասին,նրանց մեջ ձևավորվի պատկերացումներ, հասկացություններ և արժեքների համկարգ: Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլ նրա կարևոր գործառնությունն է,հասարակությանը այնպիսի մարդու հավելումը, որը մշտապես կկատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հօգուտ հասարակության և հօգուտ մարդու:Բարոյական արժեքներով դաստիարակված մարդը կլինի առաքինի և բարեկիրթ:Այսպիսի անհատի նիստուկացը, գործողություններն ու արարքներն, մարդկանց հետ հարաբերությունները,ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը, յուրահատուկ են և օրինակելի: Պետք է այնպիսի աշխատանք տանել սովորողի հետ, որ նա հասարակության համար անտանելի բեռ չդառնա:Բարոյական զարգացման գործընթացի էական օղակը բարոյական լուսավորությունն է: Դրա նպատակն է, սովորողին իրազեկել հասարակության բարոյական սկզբունքների և նորմերի մասին, որոնց նա պետք է տիրապետի: Բարոյական սկզբունքների և նորմերի իրազեկումն ու փորձը անմիջականորեն կապված է բարոյական վարքի ձևերի իրազեկման հետ և նպաստում է բարոյական գնահատականների և գործողությունների ձևավորումը: Առանց բարոյական արժեքների կայուն համակարգի ոչ գյուղ, ոչ քաղաք, ոչ երկիր չեն գոյատևի: Ալ.Շիրվանզադեի ,,Պատվի համար,, դրաման այսօր էլ ասելիք ունի:Այն այսօր էլ նույնքան արդիական է պատվի, արժանապատվության, բարոյականության և

համամարդկային այլ մնայուն արժեքների հետ միասին: Սովորողը դրամայի սյուժեին ծանոթանալուց հետո դիտում է ֆիլմը և իր սեփական կարծիքն արտահայտում ՝ այն համեմատելով այսօրվա հետ:Դրամայի բարոյահոգեբանական բովանդակությունն ավելի է խորանում , երբ երկատված է մարդը, և ընդդիմանում են օբյեկտիվ պայմանների պահանջն ու սյուբեկտիվ մղումը կամ խիղճը: Սովորողը պետք է կարողանա ճիշտ եզրահանգումների գալ և զատել անարդարն ու ազնիվը, ինչպես նաև բարոյականն ու անբարոն:Սովորողի մեջ բարոյականությունը ՝ որպես արժեքային համակարգ, արհրաժեշտ է ձևավորել նման ստեղծագործությունների միջոցով՝ վերլուծելով կյանքի բոլոր կողմերը:Շատ կարևոր է,որ ուսուցիչը սովորողի մեջ այնպես ձևավորի,, բարոյականություն,, ասվածը, որ այն երբեք չընկրկի նրա ողջ կյանքում:

Աշխատասիրությունը՝ որպես արժեքային համակարգ

Աշխատանքը մարդուն անհրաժեշտ է այնքան, որքան և սնունդը, այն պետք է լինի կանոնավոր, սիստեմատիկ, ուստի աշխատանքային դաստիարակությունը պետք է սկսվի վաղ մանկությունից: Աշխատասիրությունը ՝որպես բարոյական հատկանիշ, լավ է ձևավորվում համագործակցային աշխատանքների ժամանակ:Որքան ավելի ուժեղ է աշխատանքի նկատմամբ հարգանքի զգացումը, այնքան ավելի արդյունավետ է յուրաքանչյուր սովորողի դաստիարակությունը:Պետք չէ կարծել,որ աշխատանքը առաջին քայլերից հրապուրում է երեխաներին: Ոչ մի երեխա, չփխրեցված հող տեսնելով, ինքնակամ չի վազի դեպի բահը՝ թողնելով հետաքրքիր իր խաղը: Բայց երբ նա տեսնում և հասկանում է , որ պետք է խնամել հողը՝բարիք ստանալու համար, ոգևորվում է և ցանկանում է աշխատել;Հայ գրականության մեջ կան բազմաթիվ ստեղծագործություններ, որտեղ գովերգվում է աշխատանքը և աշխատավորը:Դանիել Վարուժանի ,,Հացին երգ,, ժողովածուն այդպիսիններից մեկն է , որտեղ ներկայացվում է հացի արարման գործընթացը և գովերգվում է հայ աշխատավորը: Դասապրոցեսում, երբ խոսում ենք հացի կարևորության, նրա խնայողության մասին, ցանկություն է առաջանում տեսնել կամ կազմակերպել այդ հետաքրքիր աշխատանքը, և գրականության դասը կարող է վերածվել դաս-էքսկուրսիայի:Կարելի է կազմակերպել այցելություններ հացաբուլկեղենի գործարաններ,կամ գյուղական բնագավառում կազմակերպել այցելություններ որևէ երեխայի տուն և ականատեսը լինել նրանց հացատանը կատարվող հետաքրքիր աշխատանքին, ինչու չէ, լինել նաև մասնակիցը այդ ամենի:Այնուհետև կարելի է հանձնարարել գործնական աշխատանք ,,Հացին երգ,, ժողովածուի վերաբերյալ: Այս ամենից հետո սովորողները աշխատանքի նկատմամբ կցուցաբերեն տարբեր մոտեցումներ, գործնական աշխատանքի միջոցով սովորողը կստանա համապատասխան գիտելիքներ, կարժևորի հացը և աշխատանքը, այնուհետև գիտելիքները կդառնան կարողություններ, իսկ վերջարդյունքում կունենանք աշխատասեր քաղաքացի:

Սովորողների աշխատանքային դաստիարակության գործընթացում պետք է հասնել այն բանին, որ երեխան աշխատանքում ներդնի իր ողջ ներուժը և սեփական մտահղացումները:

էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես արժեքային համակարգ

Ժամանակի կարևոր և կենսական հարցերից մեկն էլ էկոլոգիական դաստիարակությունն է,որը էկոլոգիայի մշակույթի հիմքը և անբաժանելի մասն է:

էկոլոգիա – հին հունարենից թարգմանաբար նշանակում է գիտություն տան մասին: էկոլոգիա հասկացության հիմքում ընկած է բնությունը, նրա պահպանությունը, որն այսօր համամարդկային հիմնախնդիր է, որով զբաղվում է ամբողջ մարդկությունը: Եթե ուզում եք, որ մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն, ապա յուրաքանչյուր մարդ շրջակա միջավայրի պահպանությունը պիտի դարձնի իր սուրբ պարտականությունը:

<<Եթե մարդն ապրի բնության բարիքները քամելու միջոցով՝ հանուն իր հաճույքների, ապա նա կդատարկի ապագան…>>

Ա.Էյնշտեյն

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում.

1.Երբ մարդը բնությունից կորզում և օգտագործում է ոչ այնքան, որքան կարելի է, և ոչ այնտեղ, որտեղ կարելի է:

2.Երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրության այնքան թափոններ և այնքան քանակով,որ բնությունը չի հասցնում ,,մարսել,,, այսինքն՝ ինքնամաքրվել:

Երկու դեպքում էլ տեղի է ունենում էկոլոգիական ճգնաժամ, ինչպես նաև աղետ: Շրջակա միջավայրի պահպանությանը իր գործուն մասնակցությունը պետք է ունենա դպրոցը, ընտանիքը և ողջ հասարակությունը: Այս գործում մեծ է հատկապես դպրոցի դերը, որտեղ իրագործվում է պլանավորված դաստիարակությունը:

<<Բնությունն ամեն ինչի մասին հոգ է տարել, մեզ միայն մնում է սովորել բնությունից…>>

Լ. դա Վինչի

Փաստացի օրինակներով պետք է բացատրել սովորողներին, թե ինչու և ինչպես պահպանել բնությունը. կարելի է բացատրել, որ մարդն առանց թթվածնի կարող է ապրել երկու րոպե, իսկ առանց ջրի՝ երեք օր: Օզոնի շերտը կարող է ճեղքվել, և արեգակի վնասակար և սպանիչ ճառագայթները կթափանցեն երկիր, ու աղետն անխուսափելի կդառնա:

Դաստիարակությունը կոչված է ոչ միայն անցյալի արժեքները փոխանցելու, այլև նոր սերդին նախապատրաստելու ապագայի ստեղծմանն ու կերտմանը: Գրականության մեջ բնապահպանական դաստիարակության նպատակը պետք է լինի.

1.Բնության և շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական ու հոգատար վերաբերմունքի ձևավորումը:

2.Մարդ-հասարակություն-բնություն համակարգի նկատմամբ անհատական վերաբերմունքի, բնության հետ շփվելու պահանջմունքի ձևավորումը:

3.Բնության խնայողության անհրաժեշտության համոզմունքների ձևավորումը:

4.Իր և ուրիշների առողջության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորումը, ինչպես նաև շրջակա միջավայրի գեղագիտական ընկալումը և գնահատումը:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային գործոնը էկոլո - գիական կրթությունն է, որը կարելի է տալ նաև ,,Հ.լեզու,, և ,,Գրականություն,, առարկաների միջոցով: Պետք է երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է

անտեսանելի թելերով, և որ պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, բարությունը, որ իրենցից յուրաքանչյուրը պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որ տիրում է բնության մեջ:

,,Բնությունը չի սիրում կատակներ անել, այն միշտ ճշմարիտ է, միշտ լուրջ, նա միշտ ճիշտ է, սխալները և թյուրիմացությունները գալիս են մարդուց...,,

Գյոթե

Մարդակային գործունեության համերկրային հետևանքները լի են էկոլոգիական ճգնաժամերով և աղետներով:Մարդ արարածը ներկայումս իր կարիքների համար օգտագործում է էկոհամակարգի կենսազանգվածի 10 տոկոսը և դրան զուգահեռ ոչնչացնում է 30 տոկոսը,որը հանգեցնում է էկոլոգիական ճգնաժամի:Ճգնաժամի հատկանիշ են համարվում կենսոլորտի վտանգավոր աղտոտումը, էներգետիկ պաշարների սպառումը, տեսակային բազմազանության կրճատումը:էկոլոգիական ճգնաժամերն ու աղետները կանխելու համար Երկրի ողջ բնակիչները պարտավոր են հսկայական ջանքեր գործադրել:21-րդ դարի էկոլոգիան կարևոր ուսմունք է մարդկության գոյատևման և կայուն զարգացման ուղիների մասին:էկոլոգիական դաստիարակության ձևավորումը հիմնականում իրականացվում է աճող սերնդի կրթադաստիարակչական աշխատանքում՝ըստ կրթական համակարգի տարբեր օղակների:Քանի որ թեման արդիական է և մտահոգիչ, փորձենք հետազոտություն անցկացնել այս համատեքստում և հասկանանք, թե որքանով է գրականության դասաժամը նպաստում աշակերտների էկոլոգիական դ աստիարակության զարգացմանը:Ներկայացնում ենք դասի պլան:

էկոլոգիական գիտակցության ձևավորումը Հ. Սահյանի ստեղծագործություններում

Դասի պլան

Դասարանը և դասաժամը ---------- 7-րդ դասարան, Գրականություն
Դասի թեման ---------- ,,Բնությունը և մարդը Սահյանի ստեղծագործություններում: ,,Անտառում ,, բանաստեղծությունը:

Նպատակները (Ի՞նչ գիտելիքներ ենք ուզում հաղորդել աշակերտներին տվյալ դասի ընթացքում)

1.Ճանաչել Հ. Սահյանին որպես բնության երգիչ և իմանալ, որ նրա պոեզիան բնության կենդանի վերարտադրություն է:
2.Իմանալ, որ բնությունը Հ. Սահյանի բանաստեղծության հողն է, զինանոցը, որտեղ մարդը և բնությունը ներդաշնակության մեջ են և լրացնում են միմյանց:

Վերջնարդյունքը

1.Կկարողանա վերլուծել բանաստեղծությունների պատկերային համակարգը:
2.Խմբի անդամներին կօգնի, արդյունավետ համագործակցելու հմտություններ ձեռք կբերի, ստացած գիտելիքները գործնականում կկիրառի, կձևավորի կարողությունները:
3.Փաստարկման , գիտակցման հմտություններ ձեռք կբերի, կգիտակցի, որ բնությունը մարդուն շռայլորեն վարձատրում է, իսկ արդյո՞ք մարդը ճիշտ է օգտագործում իրեն տրված բարիքները:

Ուսումնական նյութերը ---------- դասագիրք, տեքստեր, գրականության տետր, Սահյանի բանաստեղծությունների ժողովածու, տեսաֆիլմ բնության մասին:
Կիրառվող մեթոդները ---------- մտագրոհ, զրույց - դասախոսություն, աշխատանք խմբերով, քառաբաժան,ելքի քարտ, 3-2-1 :
Տևողությունը ---------- 45 րոպե:
Ընթացքը ---------- ԽԻԿ համակարգով:
Խթանում : Մտագրոհ: Սահյանը և բնությունը : Աշակերտների պատասխանները գրառելուց հետո, զուգահեռներ տանել Սահյան և բնություն հասկացությունների միջև (համոզվել՝ երեխաները կենսագրությունն ուսումասիրելու ժամանակ արդյո՞ք հասկացել են, որ բանաստեղծը մանկուց ճանաչել է բնաշխարհի այբուբենը):
Զրույց – դասախոսություն (ամփոփ ներկայացնում եմ մարդու և բնության կապը՝ ուշադրություն դարձնելով էկոլոգիական դաստիարակության ձեքբերմանը**):**
Բնությունը Հ.Սահյանի բանաստեղծության հողն է եղել, որտեղից գրողը վերցրել է իր պատկերները, գույներն ու ձևերը: Գրողի բնապատկերը շոշափելիության աստիճանի տեսանելի է, այն ծառայում է գեղեցիկի ընկալմանը, բնությունը մարդու գործունեության միջավայրն է: Սահյանի պատկերած բնաշխարհում մարդը, հողը, կենդանին, քարափը ներդաշնակության մեջ են, լրացնում են միմյանց: Ինչպես կենդանիների և բույսերի, այնպես էլ մարդկային հասարակության մեջ անընդմեջ պայքար է գնում բնության կողմից մեզ տրված սահմանափակ ռեսուրսներին տիրանալու համար՝ սննդի ու հագուստի հայթայթում, կենցաղային պայմանների ապահովում: Մարդկային հասարակությունը բռնկվել է կուտակելու ու սպառելու տենդով և վտանգավոր մրցակցության մեջ է մտել մայր բնության հետ: Պետք է գիտակցել, որ մարդը բնության մի մասնիկն է և Աստծո կամքով պարտադրված է ապրել ու գոյատևել բնության օրենքներին ներդաշնակ**:**
Հարց ու պատասխանի միջոցով փորձում ենք հասկանալ, թե ինչպիսի վնասներ ենք հասցնում բնությանը (Անջատու՞մ եք լույսերը, երբ դուրս եք գալիս տանից: Փակու՞մ եք ջրի ծորակը, երբ մաքրում եք ատամները: Միշտ օգտագործու՞մ եք տետրի լրիվ թերթերը…)
Իմաստավորում: Աշխատանք խմբերով: Դասարանը բաժանում եմ խմբերի և հանձնարա ռում եմ կարդալ իրենց տրված բանաստեղծական փոքրիկ հատվածները (,,Պապը,, , ,,Անձրև,, , ,,Քարափը,, , ,,Ժայռից մասուր է կաթում,,): Կարդալուց հետո համառոտ ներկայացնում են հատվածների գաղափարական բովանդակությունները:
Այնուհետև գրատախտակին գրում ենք յուրաքանչյուր խմբի եզրահանգումը.
1.Մարդկային աշխարհի և բնության միասնություն:
2.Բնության անձնավորում:
3.Հողի և մարդու միասնություն**:**
Որից հետո աշակերտներին հանձնարարում եմ բացել գրականության տետրերը, գծել քառաբաժանի աղյուսակը և լսել ,, Անտառում,, բանաստեղծության ընթերցումը: Ավարտից հետո խնդրում եմ լրացնեն աղյուսակը, և աշակերտներից չորսին հանձնարարում եմ կարդան գրածները:
Կշռադատում: Վերլուծության ենք ենթարկում բանաստեղծության պատկերային համակարգը: Փորձում ենք բանաստեղծի պես հասկանալ բնության լեզուն, անտառային կյանքի գաղտնիքները ,որտեղ բնապատկերը

ձեռք է բերում նաև ճանաչողական արժեք: Փորձում ենք հասկանալ նաև անտառի խորին խորհուրդը. ինչպես անսահման տիեզերքում, անտառում ևս կյանքն ու մահը ապրում են կողք կողքի՝ կաղնին տապալվել է, իսկ թեղին անտարբեր շարունակում է ապրել:

Անդրադարձ: 3-2-1 մեթոդով

1.Նշել երեք կարևոր բան,որ սովորեցիք:

2.Նշել թեմային առնչվող երկու խնդիրներ,որոնք արդիական են:

3.Նշել մեկ բան, որը կարող ես իրագործել:

Գնահատում: Գնահատում եմ բոլոր փուլերում ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտներին:

Հետադարձ կապ՝ ,,Ելքի քարտ,, մեթոդով

.Իմ մասնակցությունը դասին - 2մ

.Ի՞նչ սովորեցի դասից - 2մ

.Արդյո՞ք խորացրի իմ գիտելիքները - 2մ

.Դասի ո՞ր հատվածը ինձ դուր եկավ և ինչո՞ւ - 2մ

.Կարողացա՞ ընկալել այն, ինչը ինձ անհրաժեշտ էր -2մ

Տնային հանձնարարություն: Հանձնարարում եմ դիտել փոքրիկ տեսաֆիլմը ,,Մայր բնու թյուն ,, , ապա ընթերցում եմ Սահյանի բանաստեղծություններից ևս մեկը.

Խղճիդ հետ զրույց արա ամեն օր քնելուց առաջ,
Երկնքի հոնքին նայիր աղունդ փռելուց առաջ,
Մի պահ քեզ ծառ զգա կացինդ սրելուց առաջ…

Որից հետո հանձնարարում եմ խմբային աշխատանքներ .

1. Վերլուծական աշխատանք տեսաֆիլմի և ընթերցված հատվածի վերաբերյալ:

2.Ստեղծագործական շարադրություն՝ ,, Երբ ոչնչացնում ենք անտառները…,, :

3.Անգիր հատվածներ բանաստեղծությունից:

4. Բանաստեղծության նկարազարդում:

Հաջորդ դասաժամին սովորողներին տրվեցին հարցաթերթիկներ, որոնք էկոլոգիական արժեհամակարգը վերհանելու և սովորողների պատկերացումները պարզելու համար էին նախատեսված:

Հարցաշար

1.Ի՞նչ եք հասկանում բնություն ասելով:

2.Մարդը ի զորո՞ւ է վնասել կամ փրկել բնությունը:

3.Ի՞նչ եք հասկանում էկոլոգիական աղետ ասելով:

4.Բնությունը և մարդը կարո՞ղ են լինել բարեկամներ և թշնամիներ:

5.Ո՞րն է առաջնահերթ՝բնության պահպանումը, թե գիտության զարգացումը:

6.Կարելի՞ է աղբը նետել գետերի մեջ:

7.Ի՞նչ քայլեր կնախաձեռնեք, եթե տեսնեք աղբ են նետում գետի մեջ:

8.Բույսերն ու կենդանիները ունե՞ն պաշտպանության կարիք:

9. Կհավաքե՞ք ուրիշների թափած աղբը

10.Ինչո՞ւ են բույսերն ու կենդանիները հայտնվում ,,Կարմիր գրքում,,:

Հարցաշարի լրացնելուց հետո պարզվեց, որ կարող ենք փոխել սովորողի վարքը էկոլոգիական դաստիարակության միջոցով:
Ցանկացած գաղափարախոսության հմուտ և ճիշտ մատուցման դեպքում կհասնենք ցանկալի վերջնարդյունքի:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունները և հետազոտությունները հիմք են հանդիսանում կատարեու հետևյալ եզրահանգումները .
Շարունակական կրթության համակարգում դպրոցի կարևորությունը որոշվում է ոչ միայն կրթության այլ օղակների հետ, դրա շարունակական գործընթացով, այլև սովորողի անհատականության ձևավորման և զարգացման յուրահատուկ արժեքներով: Ցանկացած ժամանակահատվածում դպրոցը լուծում է երկու կարևոր խնդիր՝ ուսուցում և դաստիարակություն, որոնք փոխկապակցված են միմյանց:Արժեհամակարգի ձևավորումը կարևոր ու շարունակական գործընթաց է, և այն պետք է ձևավորել ՝ հաշվի առնելով ժամանակի պահանջներն ու մարտահրավերները:Այդ գործընթացում կարևոր նշանակություն ունեն բոլոր առարկաները, սակայն գերակշռող դերը պատկանում է հայոց լեզվին ու գրականությանը: Արժեքային համակարգը սովորողին հնարավորություն է տալիս ճիշտ վերլուծելու, համեմատելու և գնահատելու մարդկային կյանքը: Ոչ միայն սովորողը, այլ մարդն իր ամբողջ կյանքում պետք է արժևորի թե բարոյականությունը, թե մարդասիրությունը, թե հայրենասիրությունը:Սրանք այն արժեքներն են , որոնք երբեք չեն կորցնում իրենց նշանակությունն ու դերը մարդու կյանքում: Սովորողի արժեհամակարգի ձևավորմանը պետք է նպաստի և ծնողը, և ուսուցիչը:Ուսուցչի նպատակն է սովորողի մեջ սերմանելու հայրենասիրական վեհ զգացումներ հեղինակների ստեղծագործությունների միջոցով, որոնք կարժեքավորեն նրանց կյանքը:Նրանք պետք է կարողանան դիմակայել կյանքի փորձություններին: Սովորողը պետք է կարողանա յուրացնել ու կիրառել ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և կարողությունները կյանքում:Նա պետք է կարողանա ցույց տալ և հիմնավորել ասելիքը, նա պետք է կարևորի այն , որ մարդկային արժեքները հիշվում են և փոխանցվում են սերնդեսերունդ: Այս ամենը գիտակցելով՝ նա կդառան պայքարող անհատ և հասարակության լիիրավ ու օգտակար գործունեություն ծավալող քաղաքացի: Եվ այդ ժամանակ մեր առջև դրված նպատակներն ու խնդիրները լուծելի կդառնան:

Օգտագործված գրականություն ցանկ

1.Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002
2.Բաբանսկի Յու. Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում
3.Հայոց լեզու և գրականություն, հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր
4.Բալյան Ա. Աշակերտների ճանաչողական պահանջմունքները և դրանց ձևավորման ուղիները, Երևան, 1982
5.Սիմոնյան Շ. Ս. ,,Մանկավարժություն,, 1980
6.Մելանյա Դավթյան ,,Շրջակա միջավայր և բնապահպանություն,, 2010
7.Ա.Ղուկասյան Մշակույթի տեսություն, Երևան, 2003
8.Ա. Ղուկասյան, Հայոց պատմություն 8-9-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013
9.Հովի. Թումանյան,Երկերի լիակատար ժողովածու, հատոր 4,Երևան,1991